

ԲԱՌԱՅԻՆ ՀԱԿԱՆՇՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐԻՅՎ ԼԵԶՎԻ ԱՐՏԱՀԱՅՏՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿ

Ռ. Ն. ՇԱԼՈՒՆՑ

Բառային հականշային հակադրությունների, խոսքի մեջ նրանց զանա-
զան կիրառությունների մասին ընդհանրապես քիչ է գրվել լեզվաբանական
(հատկապես ոճաբանական) գրականության մեջ, իսկ հայոց լեզվի հականիշ
բառերի այդ դերի մասին բոլորովին չի գրվել: Մույն հոդվածում քննվում են
այդ հարցերը և հետազոտության մեջ ներառվում են տարբեր բնույթի հա-
կանշային հարաբերություններ արտահայտող բառերի առավել տարածուն
հակադրությունները:

Հականիշ բառերը խոսքի մեջ հակադրվում են ամենատարբեր ոճի
տեքստերում. այդ բառերով կազմված հակադրությունների կարելի է հան-
դիպել թե՛ գիտական, թե՛ պաշտոնական, թե՛ խոսակցական և թե՛ բարձր
ոճերի տեքստերում: Մի կողմ թողնելով գիտական, պաշտոնական լեզվում
արտահայտվող հակադրությունները, այստեղ ուզում ենք խոսել հականիշ-
ների՝ որպես լեզվի արտահայտչականության կարևոր միջոցներից մեկի, դե-
ղարվեստական խոսքում դրանց զանազան գործածությունների մասին:

Հականիշ բառերի իմաստային հատկանիշները հնարավորություն են տա-
լիս նրանց հակառակ իմաստներն օգտագործել իբրև ոճական հնարանք: Հա-
կանիշ բառերը կարող են օգնել գրողին կամ բանաստեղծին պատկերավոր
արտահայտելու նկարագրվող երևույթը, ճիշտ հաղորդելու ստեղծագործության
գաղափարական բովանդակությունը:

Հականիշ բառերը խոսքի մեջ շատ հաճախ օգտագործվում են անտիթեզ-
ներում (հունարեն antithesis—հակադրում): Անտիթեզը սովորական հա-
կադրություններից տարբերվում է իր արտահայտչականությամբ, խիստ հա-
կադրությամբ և հստակ ուղիղ: Օրինակ՝ «Միտուն մանկիկ, ես գնում եմ,
դու գալիս ես այս աշխարհ» (ԱԻԿ, 159), «Շատ գիտես—քիչ խոսիր» (ԱՂԱ,
6), շատ—քիչ, գնալ—գալ բառերի հակադրությամբ և բնորոշ հնչերանգով
խոսքն ընկալվում է որպես անտիթեզ: Անտիթեզը ոճական, արտահայտչա-
կան այնպիսի մի կառույց է, երբ իրենց բովանդակությամբ միմյանց հակա-
սող միավորները հակադրվում են՝ կոնկրետ տեքստում: Այդ հակադրվող միա-
վորները կարող են համապատասխանել թե՛ իրենց էությամբ տարբեր երե-
վույթների, և թե՛ միևնույն երևույթի տարբեր կողմերին: Այս տեսակետից ան-
տիթեզները թե՛ իմաստային տեսակետից և թե՛ իրենց ծավալով շատ բազ-
մազան են: Այդպիսի անտիթեզներ են. «Փրկի՛ր մեզ, աստվա՛ծ, ցերեկը տիրո-
ջից, գիշերը՝ վաճականից» (ԼԽ, 726), «Որոշակի ժամանակահատվածում
մանր վերանում է, իսկ խոշորն ավելի հստակ է րնդգծում» (ԱՎ, 15, X, 1975),

Գնաց սեփական ոտների վրա,
Իսկ հիմա նրան՝

Մէր տաղերեցին,
Ահա բերեցին... ձեռքերի վրա... (ՊՍԱԶ, 228):

Եվ ուներ նա սիրտ՝ սիրելու համար,
Մի սիրտ՝ գերելով տիրելու համար,
Մի սիրտ՝ սեփ համակ,
Մի սիրտ՝ սիրո ծով,
Իսկ ինքը սիրուց հավիտյա՛ն ցամախ... (ՊՍԱԶ, 148):

Անտիթեզները լինում են տարբեր բնույթի և կառուցվածքի: Ամենից շատ հանդիպում են այնպիսիները, որոնք արտահայտվում են երկու նախադասու-
թյունների միջոցով: Դրանք հատկապես լինում են միանման շարահյուսական
կառուցվածք ունեցող, միմյանց միտք լրացնող նախադասություններ: Շա-
րահյուսական այդպիսի զուգահեռականությունը (параллелизм) արտա-
հայտվում է հատկապես այնպիսի նախադասություններում, որոնք ունեն հա-
վասար թվով անդամներ, արտահայտում են միանման հարաբերություններ
և, վերջապես, նախադասության անդամների միանման հաջորդականություն,
ինչպես. «Ժամանակ կա լոելը ոսկի է, խոսելը՝ արծաթ, ժամանակ կա խոսելը
ոսկի է, լոելը՝ արծաթ» (ԱՂԱ, 133), «Ի՞նչ համար քնում է. ուրիշի համար երազ
է տեսնում» (ԸԽ, 716), «Հիմարը տալիս է, խելո՛ւն՝ առնում» (ԱՂԱ, 11), «Լա-
ցացնողիդ մոտ գնա, ծիծաղեցնողիդ մոտ մի գնա» (ԱՂԱ, 178):

Անտիթեզային կառուցվածք ունեցող արտահայտությունների թվին պետք
է դասել նաև այն դեպքերը, երբ հականիշ բառերն օգտագործվում են անա-
ֆորային և էպիֆորային՝ միանման սկիզբ և վերջ ունեցող կառույցներում,
իբրև հակադրվող կողմեր, ինչպես.

Գնում է ետ,
Գալիս առաջ,
Ու մազլցում զանգակատուն (ՎԴԾԾ, 192),

Գու վիվասիրտ--հրեշտակաղեմ,
Ներսից զեհեհե,
Դերսից՝ եղևմ (ՊՍԱԶ, 155):

....Ուրախ է կյանքը.
Տխու՞ր, դաժա՞ն է,
Միշտ ժողովրդից երգն անբաժան է (ՊՍԱԶ, 39):

«Աշխարհի վրա լույս վառելը դժվար է, Սուրբ գործ է: Հեշտ է սնաբելը»:
Իբրև ոճական հնարանք հականիշ բառերն օգտագործվում են նաև այն-
պիսի անտիթեզներում, երբ հականիշ բառերից մեկով սկսվում է առաջին
նախադասությունը, մյուսով՝ վերջանում նրան ներհակ, երկրորդ նախադասու-
թյունը, ինչպես.

Վատն անցնում է գնում,
Ու մնում է լավը:
Սվ ներվում են լավի
Ծուռն ու թերին (ՀԱՔԵ, 68):

Քանդողը ես եմ,
Ո՛վ է շինելու... (ՊՍԱԶ, 23),
Քանդելը հեշտ է, շինելն է գժվար (ԱՂԱ, 205):

Այսպիսի անտիթեզի միջոցով արտահայտված իրողություններն ու դեպքերը մատուցվում են այնպես, որ անտիթեզ կազմող երկու մասերը միմյանց հետ կապվում են քերականական, հնչերանգային և իմաստային սերտ կապերով և ըմբռնվում որպես մի ամբողջություն, իբրև հակադրվող իմաստների միասնություն:

Հաճախ անտիթեզ է կառուցվում ոչ թե բուն, այլ կոնտեքստային, իրադրական հականիշների միջոցով, հատկապես, երբ այդ հականիշները մի ընդհանուր միասնություն կազմող և միաժամանակ հակադրվող միավորներ են, որոնց շարքում կան նաև լրացում-լրացյալով արտահայտված հակառակ իմաստ արտահայտող միավորներ: Նման դեպքերում, սովորաբար, կոնտեքստը լինում է ծավալուն, որի կազմում կարելի է առանձնացնել անտիթեզային կառուցվածք ունեցող ավելի փոքր մի քանի հատվածներ.

Թող նրանք լինեն դաբի մունետիկ.
Իսկ դու մնում ես դաբի զաղտնաբան,
Նրանք՝ թեկուզև ծառայեցնող,
Դու, ժողովրդի ինճեակամ ծառան.

Հաջողությունը թող երես թեքի,
Հաջողությունը թող քեզնից տա խույս...
Թող նրանք լինեն հաջող աբսի շուն.
Իսկ դու կմնաս ձախուղ հետախույզ:
Թող նրանք լինեն հայտնի քաբզմանիշ,
Իսկ դու ուզում ես մնալ վերժանող:
Թող նրանք լինեն անբավ մանկաբաժնի,
Իսկ դու լինում ես կաբեվեր ծնող: (ՊՍԵԼ, 210—211):

Ինչպես տեսանք, հականիշ բառերը հիմնականում օգտագործվում են հակադրություններ կազմելիս: Սակայն բանաստեղծական տեքստերի քննությունը ցույց է տալիս, որ միայն հակադրություններ կազմելով չեն սպառվում հականիշ բառերի գործառության շրջանակները: Դրանք բանաստեղծների համար ստեղծագործական լայն հնարավորությունների աղբյուր են հանդիսացել նաև գեղարվեստական այլ միջոցների պատկերման համար: Ահա թե ինչու բանաստեղծական շատ տեքստերում դրանք այնպիսի արտահայտչական գործառություն են ստացել, որ հնարավոր չէ քննությունից դուրս թողնել: Խոսենք հականիշների մի քանի ակնառու ոճական առանձնահատկությունների մասին:

Հականիշ բառերի միջոցով արտահայտված գեղարվեստական հնարանքներից առանձնապես կարևոր է օբյեկտորեն (հունարեն οχυμορον — սրամիտանմիտ): Դա այն դեպքն է, երբ իմաստով միանգամայն հակադիր և տրամաբանորեն մեկը մյուսին բացառող բառերը կապակցվում են: Ինչպես. երիտասարդ ծերություն, ծեր երիտասարդություն, իմաստուն խելացնորություն, «նոր հին ժամանակներ» (ԵԵ, 13, XII, 1974), «օրինականացված ապօրինություն» (ՍՀ, 25, VII, 1974): Օբյեկտորեն պատկերավորման այն եղանակն է, երբ հակադեմ հասկացություններ անվանող բառերը համակցվում են իրար՝ կապակցության միտքն ավելի սուր արտահայտելու, հատկապես դրանցով արտահայտված հակադրությունն ընդգծելու համար: Օբյեկտորեն ավելի շատ կազմվում է երկու տարբեր խոսքի մասերի պատկանող, հակառակ իմաստ արտահայտող բառերից, որոնք ունեն որոշիչ-որոշյալի հարաբերություն: Այդ-

պիսի հարաբերություն ունեցող օքսիմորոնով երբեմն արտահայտվում են ամբողջական ստեղծագործությունների վերնագրեր, օրինակ՝ Լև Տոլստոյի հանրահայտ ստեղծագործություններից մեկը կոչվում է «Կենդանի դիակ», Ա. Օստրովսկու պիեսներից մեկը՝ «Անմեղ մեղավորներ», Հ. Խանդամուրի վեպերից մեկը՝ «Լուրջ կատակ» և այլն:

Պատահում են տարբեր բնույթի օքսիմորոններ, որոնցից շատերն ունեն իմաստային, շարահյուսական, բառակազմական որոշակի տարբերություններ: Հատկապես անհրաժեշտ է տարբերել համարմատ և տարարմատ միավորներով կապակցվող օքսիմորոնները: Այսպես՝

Համարմատ հականիշներով կազմվող օքսիմորոններ.

Այս անցավոր երկրի վրա
Լրցան օրերն պանդխտության,
Երկնասլաց գնում է նա,
Հագած մարմին անապական,
Անմահացած մահկանացուն՝
Միանալու իր աստրծուն (ՀԹ, հ. 2, 1958, 79):

Ա՛խ, շատը կուլ տամ, գոնե քիչն ասեմ,
Անաստված աստված, բա քո ի՞նչն ասեմ... (ՊՍԱԶ, 228),

Կարելի էր յաթաղանով,
Ջարդով
Խուրդով,
Դավով անդավ
Բնաջնջել մի ողջ անտառ (ՊՍԱԶ, 218):

Տարարմատ հականիշներով կազմվող օքսիմորոններ.

«Բանաստեղծի բացակա ներկայությունը» (ԳԹ, 26, XII, 1975):

Նա, որ ընկել էր մի հուտքի խոսքան
Եվ իր քրտինքով ջրած հերկերում
Ե՛վ խուփ էր ինքը, և՛ լուծ, և՛ հոսքան (ՊՍԱԶ, 162):

Ներկված Եփրատը ափերին տալով,
Վանա ծովակը տրտնում խնդալով
Իրար ձայն տվին՝
—... Դրեցին պատյա՜ն (ՊՍԱԶ, 92):

Օքսիմորոնները մեծ մասամբ ունենում են գոյականով և ածականով արտահայտված լրացում-լրացյալի՝ որոշիչ-որոշյալի հարաբերություններ, այսինքն՝ ամենից շատ օքսիմորոններ են կազմում գոյականից և ածականից, ինչպես.

Դարձյալ մոռանալ չէին կարենում այն դժոխքը սև
Եվ բոնաբարող այն ասկյարներին,
Այն ենիշերուն,
Այն անասունին ասուն, բայց անբան,
Որի բուրբ գլխի կեղտոտ փուլերում
Եթե խլվում-շարժվում էր մի բան,
Ապա մարդկային միտքը չէր, օ՛, ո՛չ,
Այլ միայն ոճիր (ՊՍԱԶ, 174):

Պատահում են եղակի օրինակներ, երբ հականիշ բառերով արտահայտված որոշիչ-որոշյալի հարաբերություն ունեցող բառերի միջև, հատկապես գոյականի հետ կիրառվում է մի անորոշ դերանունը: Այսպիսի դեպքերում օքսիմորոնը պահպանում է իր իմաստը՝ իր կազմում առկա հականիշ բառերի, տրամաբանորեն միմյանց հակադիր միավորների միմյանց բացառելու և լրացնելու հատկանիշը, ինչպես. «Եվ նրանց միջև անսահման մի սահման է եղել աշխարհում» (ՀԱՔԵ, 140): Նման դեպքերում, կարելի է ասել, որ օքսիմորոնը կորցնում է իր հիմնական ձևը՝ տրամաբանական տեսակետից անհամատեղելի, միայն երկու հասկացությունների անվանող բառերով կապակցված լինելը: Օքսիմորոնը կորցնում է իր հիմնական ձևը և պահպանում իմաստը նաև այն դեպքում, երբ երկու բառերի միջև, իբրև դրանց լրացնող անդամներ, հանդես են գալիս խոսքին ներհակություն, երբեմն նաև եղանակավորման իմաստ հաղորդող բառերը, ինչպես.

Պառկած էր նա՝
Ուրախ անբազ, լայց երեւի րագափուր,
Որ ունի գահ,
Բայց ոչ երբեք իր սեզ գահից վարիչում (ՊՍԱԶ, 232):

Բացի գոյականով և ածականով կազմված կապակցություններից, օքսիմորոնը կարող է արտահայտվել նաև այլ խոսքի մասերի պատկանող բառերով.

ա) ածականով և բայով. բայով և ածականով կազմված օքսիմորոնը սովորաբար ունենում է ստորոգյալի և ձևի պարագայի հարաբերություն արտահայտող անդամներ: Նման դեպքերում մեծ մասամբ բային լրացնող ածականը լրացուցիչ երանգ է հաղորդում գործողությանը, որը, կարծեք, որոշ չափով մոտեցնում է ստորոգյալի և ձևի պարագայի իմաստները, թուլացնում հակադրությունը, ինչպես.

Եվ կուրծքը դողդոջ,
Եվ վարսը խոփվ,
Եվ շրթունքները, որ խոնաւ են դեռ,
Խոսում են անխոս, որ ոսկեծամի
Գիշերն այդ գիշեր բարի է եղել (ՎԴԾԾ, 65):

Երբ Կոմիտասն այստեղ եկավ՝
Բո՛ւյն գտնելու,
Թե... արքմնի քուն մոռնելու... (ՊՍԱԶ, 158):

բ) Մակրայով և ածականով արտահայտված կապակցությամբ. «Գիշերվա մեջ չէ՞ ապաքեն, որ երազները ավելի վառ ու որոշ վերթեումներ կունենան. դիշերվա մեջ, ուր շրջանակները այնքան հմայիչ կըլլան և սպասումը՝ այնքան փաղցրորեն տաժանագին» (Գ, 12, 1974, 60):

գ) Միենույն խոսքի մասին պատկանող բառերով. օրինակ, բացառված չէ, որ քերականական միենույն արժեք ունեցող համարմատ բառերը կազմեն օքսիմորոններ: Նման դեպքերում, հականիշները չեն ընդգծում հակադրությունը, այլ, կարծեք, իմաստային տեսակետից մոտենում են, արտահայտելով միմյանց լրացնող հատկանիշներ, ինչպես.

Ու գերմարդկային-մայրական ցավով,
Ավելանում է թիվը աստղերի,
Մի սովորական... անսովոր հրաշխ (ՊՍԱԶ, 134)։

Պատահում է, երբ գրողը կամ բանաստեղծը օբսիմորոն է կառուցում ոչ թե բուն հականիշներից, այլ իմաստային մոտիկութուն ունեցող, հաճախ նույնիսկ միևնույն երևույթի կամ իրի տարբեր ձևեր անվանող բառերից։ Նման դեպքերում ևս օբսիմորոն կաղմող բաղադրիչները փոխադարձաբար միմյանց հակադրվում են և միաժամանակ՝ իրար միտք լրացնում։ Օրինակ՝ անհուր ածականը և բոց գոյականը, թվում է, որ չեն կարող հակադրվել կամ համադրվել։ Բայց ահա հետևյալ կոնտեքստում դրանք կապակցվել են՝ արտահայտելով որոշիչ-որոշյալի հարաբերություն.

Զարաճճի քամու առաօ
Տերևների սրբփումը՝
Աչնան վառած անհուր բոցում...
Ջրի ճամփին աղջիկների քշփշոցը,
Մինուճարին հեռու ճամփող
Մոր ինչպար պաշպշոցը...
Ամե՛ն, ամե՛ն, ամե՛ն ինչը...
Ծովանում էր այդ ականջում (ՊՍԱԶ, 1966, 62)։

Այդպիսի օբսիմորոններ են նաև քաղցր վիշտ, անուշ տանջանք, լավատեսական ողբերգություն և այլն։

Երբեմն օբսիմորոնի իմաստն արտահայտվում է ոչ թե տրամաբանորեն միմյանց հակասող երկու բառերի իմաստներով, այլ նաև այդ բառերը լրացնող այլ բառերի իմաստների օգնությամբ։ Այդ դեպքում օբսիմորոնը կառուցվում է ավելի ընդարձակ պլանով, ինչպես.

Ոխու բեն, նախանձ, իենթ ատելությո՞ւն
Կիտվեցին անգիր, բարդվեցին զրով,
Նույն սուրբ—սրբերի անսուրբ ձեռներով (ՊՍԱԶ, 146)։

Պատահում են հազվադեպ օրինակներ, երբ խոսքի միևնույն շղթայում կողք-կողքի հանդես են գալիս զույգ օբսիմորոններ, տրամաբանորեն միմյանց հակասող և լրացնող միավորներից կազմված կապակցություններ։ Այդպիսի օբսիմորոնների կառուցումը դժվար է, այն պահանջում է մեծ վարպետություն։ Իբրև օրինակ բերենք Եվգենի Եվտուշենկոյի բանաստեղծություններից հետևյալ քառյակը.

Ես անկարո՞ղ եմ, հավատա՞,
Փոխարինել անմտությամբ
Սիրո հո՞ւյզը անփոխադարձ՝
Փոխադարձվող... անհուզությա՛մբ (ԵՎԵՎԵՂ, 59)։

Օբսիմորոն չի կարելի համարել այն դեպքերը, երբ թեև հականիշ բառերը կիրառվում են միևնույն, ոչ ծավալուն նախադասության մեջ և որոշակի շարահյուսական հարաբերություններ են արտահայտում միմյանց նկատմամբ, բայց դրանք չի կարելի գիտել որպես միմյանց լրացնող կամ բացառող անդամներ։ Ինչպես. «Թող անկարելին դառնա կարելի» (ՊՍԵՂ, 113), «Թանկից 12 չանդես, № 3

էժանը չկա», «Ամենալավ զարդը անզարդութիւնն է», «Փոքր ամուն մեծ հայ-
րենիքում» (ԳԹ, 21, III, 1975), «Փոքր քաւորոնի մեծ արտիստները» (ԳԹ, 15,
XI, 1974) և այլն:

Երբեմն գրողը կամ ստեղծագործողը իբրև ոճական հնարանք օքսիմորոնի
օրինակով ստեղծում է այնպիսի պատկերավոր արտահայտութիւններ և հա-
մեմատութիւններ, որտեղ հաշվի են առնված հակադրվող բառերի փոխաբե-
րական իմաստները: Նման հակադրութիւնները կարող են հանդես գալ թե՛
մեկ առանձին պարզ կամ բարդ նախադասութիւնում, թե՛ ավելի ընդարձակ
պլանով, նույնիսկ մի քանի նախադասութիւններով դրսևորվող խոսքի սահ-
մաններում, ինչպես. «Եվ իր անվան հետ թողեց մի արձան՝ խոսուն, բաւ-
անձաւն, ճեղքաբաւ անձինք» (ՊՍԱ, 2, 40):

«Մհերն իսկական Պաղտասար աղբար է: Նա հնարագետ դերասան է:
Ձեռնոցի նման դերը հարմարվում է իրեն: Նա գիտե արժեքավորել իր անսպա-
սելի շարժումները, իր նայվածքները: Նա շարժվում է հանդարտ, հաղվադեպ
պոռթկումներով, որոնք ահռելի են: Իր լուրջսլեններն իսկ խոսուն են...»:
(ՀԶ, 3, VII, 1974):

Շատ հաճախ հականիշ բառերը, հատկապես ածականները, երբեմն նաև
մակբայները, օգտագործվում են իբրև մակդիրներ: Նման կիրառութիւնները
շատ են ու բազմազան, այստեղ նպատակահարմար չէ անդրադառնալ դրանց
մեկ առ մեկ: Բայց հարկ է նշել հատկապես այն դեպքերը, երբ հականիշ բա-
ռերի զուգահեռ կիրառութիւնները հանդես են գալիս միեւնոյն կոնտեքստում:
Հատկապես, երբ հականիշներից մեկը կապակցվում է նախադասութեան մեկ
անդամի հետ, մյուսը՝ նույն կամ հաջորդ նախադասութեան այլ անդամի հետ,
և ստացվում են զույգ մակդիրներ՝ որոշիչ-որոշյալներով արտահայտվող զու-
գահեռ հակադրութիւններ, ինչպես.

Քարանձավն էլի ամպ է կու տալիս
Եվ մութ աշերից լույս երկինք է քամում,
Ստվերներն էլի շորեթաթ եկել
Խոնարհվել, գետնից երկինք են խմում (ՀՄԹԵ, 54):

Միշտ էլ կճարվեն աշեր կանացի,
Որ սպեղանի լինեն քո լացին,
Որ քո սոնական ցավը իմանան
Եվ քո կարեվեր ցավին դիմանան (ԵՎԵՎԵՀ, 71):

Արքուն քամի, քնած քաւափ...
Ինչ կլինեն, եթե հանկարծ
Ծիծեռնակը մնար սլարապ,
Ընկեր չընտրեն,
Կեր չփնտրեն... (ՀՄԹԵ, 61):

Հականիշ բառերը զուգահեռաբար իբրև մակդիր օգտագործվում են նաև
ժողովրդական առած-ասացվածքներում, սեղմ և բովանդակալից արտահայ-
տութիւններում, ինչպես, «Փնթի մարդը մալուր մարդուն չի հավանի» (ԱՂԱ,
151), «Սև գիրը կարմիր օրեր կբերի» (ԱՂԱ, 146): Պատահում է, երբ միեւնոյն
մակդիրն է գրվում զույգ հականիշների վրա, ինչպես.

Գեղեցիկ ապրելու համար
Գեղեցիկ մեռնել գիտենք (ՀՄԹԵ, 96):

Հայտնի է, որ իրենց հոմանշային տարբերակներն ունեցող հականիշներից յուրաքանչյուրը գեղարվեստական խոսքում օգտագործվում է յուրովի: Հատկապես խոսքը վերաբերում է այն հականիշներին, որոնք ցույց են տալիս որևէ հատկանիշի կամ գործողության աստիճանական չափ և կարող են կազմել, այսպես կոչված, աստիճանական հարացույց: Սովորաբար հակադրությունն ավելի շեշտելու համար ընտրվում է յուրաքանչյուր թեմատիկ խմբում ներառված բառերից այն մեկը, որն ավելի մեծ չափով է արտահայտում հակադրվող հատկանիշը, ինչպես. «Բանաստեղծներից ոմանք տասնամյակներ շարունակ ապրում են ստեղծագործական եռուզեռի մեջ, երբեմն նույնիսկ բարձրանում րոպեական փառքի գագաթը, բայց ժամանակի ընթացքում զահավիժում են» (ԳԽ, 15, X, 1975), «Մերկացան իրենց արդուզարդերից, հագան քուրձը, ինչպես հագնում են զրահ» (ՊՍԱԶ, 90), «Եթե դուք նրան հանդիպեիք փողոցում, երբեք չէիք կարծի, որ նա հետախույզ է: Եվ դա բնական է: Եթե դուք այդպես կարծեիք, ուրեմն նա վատ հետախույզ կլիներ, այնինչ նա հիանալի հետախույզ էր» (ԱՎ, 26, V, 1974): Այս կոնտեքստներում հակադրված են ոչ թե բուն հականիշները, ինչպես. բարձրացում-իջեցում, հագնել-հանել, լավ-վատ, այլ բարձրացում-զահավիժում, հագնել-մերկանալ, վատ-հիանալի բառերը, որոնցից երկրորդներն ավելի խիստ են արտահայտում հականշության հիմքում գրվող հատկանիշը:

Բառային համակարգում առկա հականշային տարբերակների առատությունը բանաստեղծին կամ գրողին անսպառ հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ըստ հարկի օգտվելու դրանցից, հակադրության հիմքում դնելու որևէ հատկանիշ, որը տվյալ իրադրության մեջ էական է համարում գրողը:

Վիրավոր անձի բացված երակից
Տա՛մ արյան տեղակ պաղ կաթ է ծորում (ՊՍԱԶ, 31),
«Ի՞նչն է կոպիտ կամ նազելի» (ՊՍԱԶ, 36),
«Ի՞նչն է պայծառ, ի՞նչը մթառ, Ո՞րն է փոքր,
ո՞րն է օտառ» (ՊՍԱԶ, 38):

Իրար խառնած խոսքեր ֆեֆուշ ու բիրտ կատակ՝
Թագվորահոր տան լի բակում,
կալատակով,
Հո՞ծ ամբոխը հարսնահյուրի
Գյուղամիջով հեղեղում է խնամոնց տուն (ՊՍԱԶ, 112):

Տեր-տնօրենն դու դարձար խորթ ու խոժոռ Ցյուրիխում՝
Ստիպելով, որ զգան, թե ինչպես է մեր գինին
Տաքանալով մեր երգից՝ սարքում զվարթ (ՊՍԱԶ, 139):

Մինչ դեղձենին պարկեշտ ու ծիրանին լուրջ
Իրենց սաղարթն են աշխատում կոճկել
լիբբ քամու հանդեպ,
Հաստիկ ուռենին ու ձիգ կեռասին
Պատրաստ են իսկույն իրենց լաշակը
զլուխներից քանդել (ՊՍԱԶ, 51):

Հայտնի է, որ գեղարվեստական տեքստում բառերն իբրև ոճական հնարանք օգտագործելու եղանակներից մեկը դրանք փոխաբերական իմաստներ

րով կիրառելն է: Այս առումով հականիշների, խոսքի մեջ նրանց իմաստների փոխաբերաբար կիրառելը ոճական տեսակետից որոշ հետաքրքրություն է ներկայացնում: Այդպիսի կիրառություններում հատկապես անհրաժեշտ է տարբերել հետևյալ դեպքերը.

1) Թեև հականիշ բառերն առկա են կոնտեքստում, բայց չի իրացվում դրանց հականշությունը: Այդ հատկապես լինում է այն ժամանակ, երբ հականիշ բառերից մեկը կամ երկուսն էլ կիրառվում են ոչ թե ուղղակի, այլ փոխաբերական իմաստներով, որոնց շնորհիվ կոնկրետ իրադրության մեջ, կոնկրետ տեքստում, բառային այդ շրջապատում չեն ըմբռնվում որպես հականիշներ: Օրինակ՝ հայերենում հականիշ են լոել-խոսել բառերը: Բայց ահա հետևյալ կոնտեքստում լոել-խոսել հականիշներից երկրորդը կիրառվել է փոխաբերական իմաստով և ըմբռնվում է նրա խաղալ, արտահայտել իմաստը. «Այդ կինոնկարում դուք չափից ավելի երկար եք լոում: Նույնիսկ մասնագետները դժվարանում են որևէ բան ասել հնչյունային կինոյի պրակտիկայից: Եվ այդ բոլորներին սկսում է «խոսել» ձեր դեմքը» (ԱՎ, 26, VI, 1974):

2) Ոչ հականիշ բառերի իմաստները կիրառվում են այնպես, որ դրանք ընկալվում են որպես հականշային հարաբերություններ արտահայտող իմաստներ, ինչպես. «Արիությունը եղավ կծիկ մի սև, նաև քննությունը՝ լեղվին մեղր ու քույն» (ՎԴԾԾ, 35): «Եվ օտար աչքի չեղած շյուղն անգամ, Վերածվեց հսկա բարդու գերանի» (ՊՍԱԶ, 145): «Ախորժակով կերած քույնը անախորժակ մեռունից էլ լավ է» (ԱՂԱ, 307): «Ինչպես դարձրել ես բանտը հայրենիք. եվ ողջ աշխարհը լայնարձակ մի բանտ» (ՀԹ, հ. 1, 1958, 83):

Հաճախ նման կիրառություններում արտահայտվում է հականիշ իմաստներից միայն մեկը, իսկ մյուսը՝ ենթադրվում է: Օրինակ՝ Վ. Տերյանի գրչին պատկանող հետևյալ քառատողում իրացվել է մեռնել-ծնվել բառերից առաջինի փոխաբերական իմաստը՝ մուրքն ընկնել, իրիկնանալ, օրը վերջանալ.

Մեռնում է օրը, իջավ թափանցիկ
 շյունի մանվածք դաշտերի վրա,
 հաղաղ, անշար է, պայծառ, գեղեցիկ,
 Անտրտունջ նինջը մահացող օրվա (ՎՏ, հ. 1, 1950, 3):

Չպետք է անտեսել այն դեպքերը, երբ իմաստային միևնույն դաշտի պատկանող, հաճախ նույնիսկ շատ մոտիկություն, բայց քերականական տարբեր արժեք ունեցող ոչ հականիշներն օգտագործվում են իբրև հակադրություն արտահայտող միավորներ, ինչպես. «Չարք բարուրամբ, անեծքն օրնունուրամբ հատուցիր, տիկի՛ն, հայտնի կանոն է» (ՎՇ, հ. 2, 16), «Ինչ անեմ աշխարհիս լայնությունը, որ ոտքերս նեղ տեղն են» (ԱՂԱ, 25), «Եթե կյանքում կա քեզ նման մի քանկություն, ևս ինչպի՞ս եմ կյանքին նայել Լժան աչքով» (ՊՍԵԼ, 11), «Այստեղ արդեն մոբինգոնից մենակ եմ, Մթից ներմակ անեղրությունը սևացավ» (ԳԹ, 17, X, 1975):

Հականիշ բառերի միջոցով արտահայտված խորիմաստ մտքերի կարևոր է հանդիպել փիլիսոփայական բնույթ ունեցող ստեղծագործություններում: Գեղարվեստական երկերում, հատկապես բարձր ոճի շափածո խոսքում, պատահում է, երբ հեղինակը իր միտքն արտահայտելու համար օգտագործում է մի շարք հականիշ բառերի հակադրման և համադրման եղանակը: Բերենք Հ. Թումանյանի «Դեպի անհունը» պոեմից մի հատված, ուր աշխարհի հարա-

բերակցվող տարբեր հակասություններն անվանող հականիշների հակադրության օգտագործումով հեղինակը հանգում է փիլիսոփայական խոր մտահանգումների:

Ես լսում էի... Ու հանկարծ ես էլ
Ուղեցի հաշտվել հզոր մահի հետ.
Անճար, ակամա սկսա մըտածել,
Թե մահը լավ է, միայն մենք՝ տղետ,
Մենք խեղճ, կարճամիտ, ու շենք հասկանում՝
Ինչպես է գալիս և ուր է տանում,
Թե՛ և՛ կյանք, և՛ մահ—անցավոր, ունայն,
Մի մեծ հավերժի ձևեր են միայն,
Ինչպես որ ահա «Երեկն ու էսօր»:
Էսօրն ինչ է որ,—մի Երեկ է նոր:
Էսօրն էլ կանցնի Երեկ կղաղնա,
Եվ սակայն կրկին միևնույնն է նա.
Եվ այսպես անվերջ էսօր ու Երեկ
Փոխվում են միայն, միշտ մընում է մեկ—
Մեկ մեծ ժամանակ, էսպես էլ հոգին
Փոխվում է միայն կեղևն արտաքին,
Մարմինն՝ էսօրվան օրին նըմանակ,
Իսկ ինքը անվերջ, ինչպես ժամանակ (ՀԹ, հատ. 2, 1958, 76):

Այստեղ թեև հակադրված են հոգի-մարմին, կյանք-մահ, Երեկ-այսօր իմաստային տարբեր դաշտերի պատկանող հականիշները, բայց հեղինակը չի ընդգծել դրանց հակադրությունը, ընդհակառակը, շեշտում է միմյանց հարաբերակցվելու նրանց առանձնահատկությունը, իրական աշխարհի, տիեզերական անսահմանության, հարաբերական ժամանակի, մասի և ամբողջի, միևնույն երևույթի տարբեր կողմերին պատկանելու հատկանիշը:

Հականիշ բառերի նման կիրառությունների համար, իբրև ոճական հնարանք օգտագործվում է ոչ թե միմյանց բացառելու նրանց հատկանիշը, այլ դրանց հավասարությունը, միմյանց լրացնելը, միևնույն խմբի մեջ միավորելը:

Մենք հողեղեններս՝ անճար ու շնչին,
Ի՞նչ ենք աստծու կամքի առաջին...
Բառ է էս ճամփեն ամենքիս համար,
Մեր, Երիտասարդ, մեղավոր, արդար,
Ամենքը, ամենքը, էստեղ ինչ որ կան,
Էսօր լսե՛ք լիուց ամենքը կերթան,
Ով որ կըմնա,
Թող նա սլարծենա (նույն տեղում):

Հականիշ բառերն իբրև ոճական հնարանք օգտագործվում են նաև պարբերույթի թվարկվող անդամների շարքում, իբրև դրանցով հակադրվող միասեռ անդամներ: Ի տարբերություն խոսքի կառուցման մյուս ձևերի, պարբերույթը գեղարվեստական արտահայտման այն եղանակն է, երբ բարդ և ամբողջական արտահայտությունները կազմվում են համասեռ անդամներից, որոնք ունեն արտաբերման բարձր և լարված հնչերանգ, իսկ այնուհետև հաջորդող դադար, որի շարունակությունն է կազմում իջնող հնչերանգով ավարտվող եզրակացությունը: Հականիշ բառերով կազմված հակադրություններ

՝ Պարբերույթի մասին մանրամասն տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի պարբերույթը, Երևան, 1967:

ավելի շատ հանդիպում են ներհակական լնույթ ունեցող պարբերություններում, հատկապես, երբ բանաստեղծը աշխատում է շեշտել տարբեր երևույթների, դեպքերի, իրադրությունների հակադրությունների սուր բնույթը, դրանց միջոցով արտահայտվող խոսքի բարձրացման և իջեցման լարվածությունը, նրանց իմաստային հականշությունը.

երաժշտում և դեռ պիտի
 Հորդարխուն երաժշտեր,
 Վիշտ երգելով՝ ցրեր վշտեր,
 Հույս երգելով՝ հավատ շեշտեր,
 Սուտը հերքած՝ ճիշտը ճշտեր,
 Բայց մի ահեղ գիշերվա մեջ
 Արյուն հագան կանաչ դաշտեր,
 Եվ հույս, հավատ, կյանք ու անուրջ
 Օր ցերեկով ողջը դարձավ մի վատ երազ,
 Սկիզբ առավ աշխարհակուլ մի պատերազմ (ՊՍԱԶ, 170):

Այսպիսի պարբերություններում հականիշների միջոցով արտահայտված հակադրություններն ունենում են ներդաշնակ ու համաչափ կշռույթային տարրեր, երաժշտականության մեջ օժտված չափակից անդամներ:

Հականիշ բառերի, խոսքի մեջ դրանց արտահայտչականության եղանակները սրանցով չեն սահմանափակվում: Այստեղ մենք նշեցինք միայն նրանց ամենաակնառու առանձնահատկությունները:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻԿ—ԱՎ. Իսահակյան, Կարոտ	ՀԹ—Հ. Թումանյան
ԱՂԱ—Ա. Ղանալանյան, Առածանի	ՀԶ—Հայրենիքի ձայն
ԱՎ—Ավանգարդ	ՀՍՔԵ—Հ. Սահյան, Քարափների երգը
Գ—Գարուն	ՊՍԱԶ—Պ. Սևակ, Անլուրի զանգակատուն
ԳԹ—Գրական թերթ	ՊՍԵԼ—Պ. Սևակ, Եղիցի լույս
ԳԵՎՏ—Գիտություն և տեխնիկա	ՍՀ—Սովետական Հայաստան
ԵՆ—Երեկոյան Երևան	ՎԴԾ—Վ. Դավթյան, Ծուխ ծխանի
ԵՎԵՎԵՀ—Եվ. Եվտուշենկո, Երրորդ հիշողություն	ՎՇ—Վ. Շեքսպիր
ԵՍ—Երեկոյան Երևան	ՎՏ—Վ. Տերյան
ԸԽ—Ընդդեմ խավարի	

ЛЕКСИЧЕСКАЯ АНТОНИМИЯ КАК ОДНО ИЗ ВЫРАЗИТЕЛЬНЫХ СРЕДСТВ ЯЗЫКА

Р. Н. ШАЛУНЦ

(Резюме)

О лексической антонимии, о ее различных реализациях в речи очень мало писалось в лингвистической (стилистической) литературе, а антонимы армянского языка не исследовались вообще. Здесь рассматриваются наиболее распространенные противопоставления слов в армянском языке, находящихся в антонимических отношениях разного рода, в частности в антитетических, оксюморонных и метафорических.